



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՈՐՈՇՈՒՄ

Գանգատ թիվ 10446/05

Ներկայացված՝ Իրինա ԵԴԻԳԱՐՅԱՆԻ կողմից

ընդդեմ Հայաստանի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Երրորդ բաժանմունք),
2011 թվականի նոյեմբերի 15-ին հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Ժոզեփ Քասադեվալ [Josep Casadevall]՝ *Նախագահ,*

Ալվինա Գյուլումյան [Alvina Gyulumyan],

Էփսերոս Մայեր [Egbert Myjer],

Ինետա Չիմելե [Ineta Ziemele],

Լուիս Լոպես Գեռա [Luis López Guerra],

Միհայ Պուալելունջ [Mihai Poalelungi],

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos]՝ *դատավորներ,*

եւ Սանտիագո Կեսադա [Santiago Quesada]՝ *Բաժանմունքի քարտուղար,*



հաշվի առնելով 2005 թվականի մարտի 12-ին ներկայացված վերոնշյալ գանգատը,

հաշվի առնելով պատասխանող Կառավարության կողմից ներկայացված դիտարկումները եւ դիմումատուի կողմից ի պատասխան ներկայացված դիտարկումները,

հաշվի առնելով պատասխանող Կառավարության կողմից 2009 թվականի հունվարի 15-ին ներկայացված հայտարարությունը, համաձայն որի՝ Դատարանից պահանջվում է գանգատը հանել քննվող գործերի ցուցակից, եւ դիմումատուի պատասխանն այդ հայտարարությանը,

անցկացնելով խորհրդակցություն, որոշեց հետեւյալը.

ՓԱՍՏԵՐԸ

1. Դիմումատու տկն Իրինա Եղիգարյանը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, որը ծնվել է 1950 թվականին եւ ապրում է Երեւանում: Նրան դատարանում ներկայացրել է Երեւանում գործող իրավաբան պրն Վ. Գրիգորյանը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

Ա. Գործի փաստական հանգամանքները

2. Գործով փաստերը, որոնք ներկայացրել են կողմերը, կարելի է ամփոփել հետեւյալ կերպ:

1. *Դիմումատուի բնակարանի օտարման հետ կապված վարույթները*

3. Դիմումատուին եւ նրա մորը համատեղ սեփականության իրավունքով պատկանել է Երեւան, Պուշկինի փող. 34 հասցեում գտնվող, 49 քառակուսի մետր մակերես ունեցող բնակարան: Պարզվում է, որ բնակարանը կազմել է այն հողամասի վրա գտնվող մեկհարկանի տան մի մասը, որի նկատմամբ դիմումատուն ունեցել է օգտագործման իրավունք:

4. 2002 թվականի օգոստոսի 1-ին Կառավարությունն ընդունել է թիվ 1151-Ն որոշումը, որով հաստատվել են Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում պետության կարիքների համար քաղաքաշինական նպատակներով վերցվող անշարժ գույքի օտարման գոտիները՝ 345 000 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով: Բուզանդ փողոցը ներառված է եղել օտարման գոտիներում ընդգրկված փողոցների ցանկում:

5. 2004 թվականի փետրվարի 2-ին Երեւանի կենտրոնում քաղաքաշինական ծրագրերի իրականացումը վերահսկող պետական գործակալությունը դիմումատուին եւ նրա մորն ուղարկել է նամակ, որտեղ նշվել է, որ նրանց գույքը գտնվում է օտարման գոտում եւ պետք է վերցվի պետության կարիքների համար: Այնուհետեւ գործակալությունը նշել է, որ տվյալ գույքը գնահատման լիցենզավորված կազմակերպության կողմից գնահատվել է 12 870 ամերիկյան դոլար (ԱՄՆ դոլար), եւ նրանց առաջարկել է ազգային արժույթով համարժեք գումար՝ որպես փոխհատուցում: Նրանց առաջարկվել է հավելյալ 10 844.30 ԱՄՆ դոլարի չափով գումար՝ որպես ֆինանսական խրախուսանք, եթե նրանք համաձայնվեին մինչեւ 2004 թվականի փետրվարի 5-ը կնքել համաձայնագիր եւ հաջորդող տասն օրվա ընթացքում գույքը հանձնել գործակալությանը:

6. Պարզվում է, որ դիմումատուները չեն ընդունել առաջարկը, քանի որ նրանց չի գոհացրել փոխհատուցման գումարի առաջարկվող չափը:

7. 2004 թվականի մարտի 15-ին գործակալությունը հայց է ներկայացրել դիմումատուի եւ նրա մոր դեմ՝ պահանջելով նրանց պարտավորեցնել, որ ստորագրեն բնակարանը պետության կարիքների համար վերցնելու վերաբերյալ համաձայնագիրը:

8. Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանում իրականացված վարույթի ընթացքում դիմումատուն, *inter alia* (ի թիվս այլնի), նշել է, որ իր մայրը մահացել է 1999 թվականի ապրիլի 13-ին, եւ բնակարանի իր բաժնի հետ կապված ժառանգության հարցը դեռ չի որոշվել:

9. 2004 թվականի օգոստոսի 4-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը բավարարել է գործակալության հայցը՝ պարտավորեցնելով դիմումատուին ստորագրել 12 870 ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի չափով փոխհատուցում նախատեսող համաձայնագիրը եւ կայացնելով նրան վտարելու մասին որոշում:

10. 2004 թվականի օգոստոսի 18-ին դիմումատուն ներկայացրել է վերաքննիչ բողոք: Իր բողոքում նա ընդունել է, *inter alia*, որ բնակարանի՝ իր մահացած մոր բաժնի հետ կապված իրավահաջորդության հարցն օրենքով սահմանված կարգով դեռ չի լուծվել:

11. 2004 թվականի սեպտեմբերի 7-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է դիմումատուի բողոքը եւ բավարարել է գործակալության կողմից ներկայացված հայցը նույն հիմքերով, ինչ Վարչական շրջանի դատարանը:

12. 2004 թվականի սեպտեմբերի 22-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք: Իր բողոքում նա, *inter alia*, արել է 2004 թվականի օգոստոսի 18-ի իր վերաքննիչ բողոքում արված հայտարարությանը համանման հայտարարություն:

13. 2004 թվականի հոկտեմբերի 1-ին Վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը եւ Վերաքննիչ դատարանի վճիռը թողել է անփոփոխ:

Պարզվում է, որ այն շենքը, որտեղ գտնվում էր դիմումատուի բնակարանը, հաջորդ մի քանի օրվա ընթացքում քանդվել է:

14. Դիմումատուն նշում է, որ վերոնշյալ դատական վճռով իրեն շնորհված փոխհատուցման գումարը երբեք չի վճարվել:

2. Դիմումատուի ժառանգությունը ճանաչելու հետ կապված վարույթները

15. 2004 թվականի ապրիլի 19-ին դիմումատուն եւ նրա քույրը, որն ապրում էր նույն բնակարանում, ներկայացրել են հայց՝ պահանջելով ճանաչել իրենց մոր բաժնի եւ այն հողամասի նկատմամբ իրենց ժառանգության իրավունքը, որտեղ գտնվում էր տվյալ գույքը:

16. 2004 թվականի հոկտեմբերի 8-ին Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանը մերժել է նրանց հայցը՝ հողամասի մասով, այն չհիմնավորելու հիմքով: Ինչ վերաբերում է իրենց մահացած մոր բաժնին, ապա Վարչական շրջանի դատարանն այս մասով վարույթն ավարտել է այն հիմքով, որ տվյալ շենքն արդեն քանդվել է:

17. 2004 թվականի հոկտեմբերի 22-ին դիմումատուն ներկայացրել է վերաքննիչ բողոք:

18. 2004 թվականի դեկտեմբերի 22-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանն անփոփոխ է թողել Վարչական շրջանի դատարանի վճիռը:

19. 2005 թվականի հունվարի 4-ին դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը 2005 թվականի փետրվարի 10-ին մերժվել է Վճռաբեկ դատարանի կողմից:

Բ. Համապատասխան ներպետական օրենսդրությունը

20. Համապատասխան ներպետական դրույթների համառոտ նկարագրությանը ծանոթանալու համար տե՛ս *Մինասյանը եւ Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի [Minasyan and Semerjyan v. Armenia]* գործով վճիռը (թիվ 27651/05, §§ 23-35, 2009 թվականի հունիսի 23):

ԲՈՂՈՔՆԵՐԸ

21. Դիմումատուն Թիվ 1 արձանագրության մասով բողոքել է, որ՝

ա) իրեն սեփականությունից զրկելը չի իրականացվել օրենքով, մասնավորապես՝ Սահմանադրության 28-րդ հոդվածով նախատեսված պայմաններին, ինչպես նաեւ պատմության եւ մշակույթի հուշարձանների նկատմամբ կիրառելի կանոններին համապատասխան,

բ) ինքը չի ստացել դատարանների կողմից շնորհված փոխհատուցումը,

գ) շնորհված փոխհատուցման գումարը եղել է ոչ բավարար, եւ

դ) որեւէ փոխհատուցում չի շնորհվել այն հողամասի համար, որի նկատմամբ ինքն ունեցել է օգտագործման իրավունք:

22. Դիմումատուն Կոնվենցիայի 6-րդ հոդվածի մասով բողոքել է, որ իր ժառանգության ճանաչման հետ կապված վարույթների ընթացքում դատարանները չեն ընդունել հիմնավորված վճիռներ:

23. Դիմումատուն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի մասով բողոքել է, որ իր նկատմամբ խտրական վերաբերմունք է ցուցաբերվել, քանի որ երրորդ անձին պատկանող մեկ այլ տուն, որը նույնպես եղել է պատմական հուշարձան, պահպանվել է, մինչդեռ իրենը քանդվել է:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ա. Դիմումատուին բնակարանից զրկելը

24. Դիմումատուն բողոքել է իրեն սեփականությունից զրկելու վերաբերյալ: Նա հիմնվել է Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի վրա, որը, այնքանով, որքանով վերաբերելի է, ունի հետեւյալ բովանդակությունը.

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրա գույքից, բացառությամբ ի շահ հանրության եւ այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

25. Գործի բարեկամական կարգավորմանն ուղղված անարդյունավետ բանակցություններից հետո Կառավարությունը 2009 թվականի հունվարի 15-ի գրությամբ Դատարանին տեղեկացրել է, որ գանգատով բարձրացված խնդրի լուծման նպատակով առաջարկել է միակողմանի հայտարարություն անել: Այնուհետեւ նրանք Դատարանից պահանջել են գանգատը հանել քննվող գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածին համապատասխան:

26. Հայտարարությունն ուներ հետեւյալ բովանդակությունը.

«... սույնով Կառավարությունը ցանկանում է միակողմանի հայտարարության միջոցով արտահայտել իր կողմից այն փաստի ընդունումը, որ դիմումատուներին իրենց սեփականությունից զրկելը չի համապատասխանել Կոնվենցիայի[ն կից] թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին:

Այս հանգամանքներում, ինչպես նաեւ հաշվի առնելով գործի կոնկրետ փաստերը՝ Կառավարությունը հայտարարում է, որ դատարանի վճռի հիման վրա դիմումատուի բանկային հաշվին փոխանցված 12 870 ԱՄՆ դոլար գումարի փոխարեն իրենք առաջարկում են դիմումատուին տալ 70 քառակուսի մետր մակերեսով բնակարան մի շենքում, որի շինարարական աշխատանքներն ավարտվելու են 2010 թվականին: Շենքը գտնվելու է Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում: Բացի բնակարանից, 2004 թվականի հոկտեմբերից՝ մինչեւ շենքի շինարարության ավարտը (2010 թվականի օգոստոս), դիմումատուին ամսական կվճարվի **120 000 ՀՀ դրամ**՝ այլ բնակարան վարձակալելու համար (**ընդհանուր՝ 8 520 000 ՀՀ դրամ**): Կամ, որպես այլընտրանք,

Կառավարությունն առաջարկում է վճարել **29 520 000 ՀՀ դրամ**: Կառավարությունն այս հայտարարությունը համարում է ողջամիտ՝ Դատարանի նախադեպային իրավունքին համապատասխան:

Վերոնշյալ գումարը, որը նախատեսված է ամբողջ նյութական եւ ոչ նյութական վնասը, ինչպես նաեւ բոլոր ծախսերը եւ ծախքերը հատուցելու համար, ազատվում է գանձման ենթակա ցանկացած հարկից: Այն ենթակա է վճարման Դատարանի կողմից կայացված որոշման մասին ծանուցվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում՝ [Կոնվենցիայի] 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն: Այս գումարը նշված եռամսյա ժամկետում չվճարելու դեպքում Կառավարությունը պարտավորվում է այդ ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, վճարել այդ գումարի նկատմամբ հաշվարկված պարզ տոկոսադրույք՝ Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

...

Համապատասխանաբար, Կառավարությունը կարծում է, որ վերոնշյալ գանգատի հանգամանքները կարող են հանգեցնել Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով սահմանված եզրակացության, հետեւաբար գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ՝ Կառավարության միակողմանի հայտարարությանը համապատասխան»:

27. Ամսաթիվ չպարունակող գրությամբ դիմումատուն առարկել է Կառավարության հայտարարությանը: Նա նախեւառաջ նշել է, որ իր գործով բարձրացվել էին այնպիսի հարցեր, որոնցով Դատարանը նախկինում որոշում չէր կայացրել, ինչպես օրինակ՝ այն հարցը, թե արդյոք ժառանգության իր իրավունքները կարող էին համարվել սեփականություն: Երկրորդ, կողմերի միջեւ եղել է գործի փաստերի, մասնավորապես՝ իր սեփականության շրջանակի հետ կապված անհամաձայնություն: Մասնավորապես, նա պնդել է, որ իր սեփականության մեջ ներառված էր ամբողջ բնակարանը, ինչպես նաեւ այն հողամասը, որի վրա այն կառուցված էր, մինչդեռ Կառավարությունը վիճարկել էր այդ պնդումը: Երրորդ, Կառավարության հայտարարության ձեւակերպումները եղել են շատ լայն, իսկ առաջարկվող փոխհատուցումը եղել է ոչ պատշաճ եւ ոչ բավարար՝ [գանգատը] քննվող գործերի ցուցակից հանելու համար:

28. Դատարանն ի սկզբանե նկատում է, որ կողմերը չեն կարողացել համաձայնության գալ գործի բարեկամական կարգավորման պայմանների առումով: Այն կրկին նշում է, որ, Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, բարեկամական կարգավորման ընթացակարգով տեղի ունեցող բանակցություններն իրականացվում են խորհրդապահական կարգով, իսկ Դատարանի կանոնակարգի 62-րդ կանոնի 2-րդ կետով նաեւ սահմանվում է, որ բարեկամական կարգավորմանն ուղղված փորձի շրջանակում որեւէ գրավոր կամ բանավոր հաղորդակցության եւ առաջարկի կամ համաձայնության չի կարող հղում կատարվել, կամ դրանք որպես հիմք ընդունվել դատական վարույթում (տե՛ս *Մերիակրին ընդդեմ Մոլդովայի* (ցուցակից հանված) [*Meriakri v. Moldova* (striking out)], թիվ 53487/99, § 28, 2005 թվականի մարտի 1): Հետեւաբար Դատարանը կշարունակի քննությունը՝ հիմք ընդունելով Կառավարության միակողմանի հայտարարությունը եւ կողմերի այն դիտարկումները, որոնք ներկայացվել են բարեկամական կարգավորման ընթացակարգով տեղի ունեցած բանակցությունների շրջանակից դուրս՝ հաշվի չառնելով կողմերի փաստարկները՝ արված խնդրի բարեկամական կարգավորման հնարավորությունների ուսումնասիրության համատեքստում, եւ անտեսելով խնդիրը բարեկամական կարգավորմամբ չլուծելու պատճառները (տե՛ս *Նիշկեի գույքի սեփականատերն ընդդեմ Շվեդիայի* [*Estate of Nitschke v. Sweden*], թիվ 6301/05, § 36, 2007 թվականի սեպտեմբերի 27):

29. Դատարանն ընդգծում է, որ Կոնվենցիայի 37-րդ հոդվածով սահմանվում է, որ Դատարանը քննության ցանկացած փուլում կարող է որոշել զանգատը հանել գործերի ցուցակից, եթե հանգամանքները հանգեցնում են այդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» կամ «գ» ենթակետերում նշված եզրակացություններից որեւէ մեկին: 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով Դատարանին մասնավորապես իրավունք է վերապահվում գործը հանել քննվող գործերի ցուցակից, եթե.

«Դատարանի կողմից հիմք ընդունված որեւէ այլ պատճառով գանգատի քննությունը շարունակելն արդարացված չէ»:

30. Այն նաեւ նշում է, որ որոշ հանգամանքներում Դատարանը կարող է գանգատը հանել գործերի ցուցակից՝ 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն՝ պատասխանող Կառավարության կողմից միակողմանի հայտարարության հիման վրա, նույնիսկ եթե դիմումատուները ցանկություն են հայտնում, որ գործի քննությունը շարունակվի:

31. Այդ նպատակով Դատարանը պետք է ուշադիր քննի հայտարարությունը նախադեպային իրավունքից, մասնավորապես՝ Թահսին Ակարի [Tahsin Acar] գործով վճռից բխող սկզբունքներին համապատասխան (տե՛ս *Թահսին Ակարն ընդդեմ Թուրքիայի* [ՄՊ] [*Tahsin Acar v. Turkey* [GC]] թիվ 26307/95, §§ 75-77, ՄԻԵԴ 2003-VI, նաեւ «Վազա» ՍՊԸ-ն *ընդդեմ Լեհաստանի (որոշում)* [*WAZA Spółka z o.o. v. Poland* (dec.)] թիվ 11602/02, 2007 թվականի հունիսի 26, եւ *Սուլվիհնսկան ընդդեմ Լեհաստանի (որոշում)* [*Sulwińska v. Poland* (dec.)] թիվ 28953/03):

32. Դատարանը նախելառաջ կանդրադառնա դիմումատուի առարկությանը: Այն ի սկզբանե նշում է, որ նրա կողմից ներկայացված փաստարկն այն մասին, որ գործում բարձրացվել են այնպիսի հարցեր, որոնցով Դատարանի կողմից նախկինում որոշում չի կայացվել, վերաբերում է այն հարցերին, որոնք դուրս են սույն գանգատի շրջանակից: Ավելի կոնկրետ, դիմումատուն իր գանգատի մեջ երբեւէ չի պնդել, որ իր ժառանգության իրավունքները Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի իմաստով համարվել են սեփականություն, կամ այդ առնչությամբ չի ներկայացրել որեւէ բողոք: Այդ հոդվածի համաձայն իր կողմից ներկայացված բողոքները սահմանափակվել են բացառապես իր բնակարանի օտարման, ինչպես նաեւ հողամասի նկատմամբ օգտագործման իր իրավունքի ենթադրյալ դադարեցման հետ կապված հարցերով, որոնց անդրադարձ կկատարվի ստորեւ: Ինչ վերաբերում է դիմումատուի բնակարանի օտարմանը, ապա Դատարանը նշում է, որ

Հայաստանի դեմ բերված մի գործով այն արդեն հաստատել է պատասխանող պետության համար Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածից բխող պարտավորությունների բնույթը եւ ծավալը՝ Կառավարության թիվ 1151-Ն որոշմամբ նախատեսվող կառուցապատման ծրագրերի իրականացման նպատակով Երեւանի Կենտրոն թաղային համայնքում գույքի օտարման առնչությամբ (տե՛ս *Մինասյանի եւ Սեմերջյանի գործը*՝ վերելում հիշատակված, §§ 69-72): Այն նշում է, որ սույն գործի փաստական հանգամանքները եւ դիմումատուի բողոքի բնույթը գրեթե նույնական են:

33. Ինչ վերաբերում է փաստերի հետ կապված ենթադրյալ անհամաձայնությանը, ապա Դատարանը չի համարում, որ գործի փաստերի առնչությամբ կողմերի միջեւ որեւէ վեճ կարող է ինքնաբերաբար կանխել 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետի համաձայն գանգատը քննվող գործերի ցուցակից հանելը՝ միակողմանի հայտարարության հիման վրա: Վեճը պետք է լինի լուրջ եւ իրական. այն պետք է լինի գանգատի եւ դրանում բարձրացված հարցերի շրջանակներում, ինչպես նաեւ պետք է համապատասխանի կողմերի կողմից ավելի վաղ ներկայացված փաստարկներին:

34. Սույն գործում Դատարանը նշում է, որ դիմումատուն հենց ինքն էլ ներպետական դատարաններում միանշանակ ընդունել է, որ բնակարանի՝ իր մահացած մոր բաժնի հետ կապված իրավահաջորդության հարցերը դեռ չեն լուծվել (տե՛ս վերելում՝ 8-րդ եւ 10-րդ պարբերությունները): Նույն ձեռով, Դատարան ներկայացված իր գանգատի մեջ նա ընդունել է, որ իր սեփականությունը գրանցվել է միայն բնակարանի կեսի նկատմամբ: Նույնը վերաբերում է դրանով ծանրաբեռնված հողամասին. դիմումատուն օտարման հետ կապված վարույթի ընթացքում երբեւէ չի պնդել, որ տվյալ հողամասն իր սեփականությունն է: Նույն ձեռով, Դատարան ներկայացված իր գանգատի մեջ նա հստակ նշել է, որ ինքը հողամասի նկատմամբ ունի միայն օգտագործման իրավունք: Ավելին, դիմումատուն ներպետական դատարաններում հարուցել է վարույթների առանձին շարք՝ ապարդյուն պահանջելով ճանաչել իր

սեփականության իրավունքը բնակարանի՝ իր մահացած մոր բաժնի եւ հողամասի նկատմամբ (տե՛ս վերելում՝ 15-19-րդ պարբերությունները): Միայն 2007 թվականի նոյեմբերի 16-ին իր կողմից ներկայացված դիտարկումներում եւ արդարացի փոխհատուցման պահանջում է նշվել, որ դիմումատուն պահանջել է այդ գույքերի նկատմամբ սեփականության իրավունք: Այսպիսով, Դատարանը գտնում է, որ չկա գործի փաստերի առնչությամբ որեւէ իրական վեճ, քանի որ դիմումատուի պնդումները չեն հիմնավորվում գործի նյութերով եւ ուղղակիորեն հակասում են իր կողմից նախկինում ներկայացված փաստարկներին:

35. Վերջապես, առաջարկվող փոխհատուցման բնույթին եւ շրջանակին անդրադառնալով՝ Դատարանը նշում է, որ Կառավարությունն առաջարկել է երկու այլընտրանքային տարբերակ՝ բնակարանի տրամադրում կամ գումարի վճարում, որոնցից երկուսն էլ առաջարկվում են դիմումատուին արդեն վճարված գումարի փոխարեն: Հաշվի առնելով առաջին այլընտրանքային տարբերակը՝ Դատարանը համոզված չէ, որ սա ընդունելի առաջարկ է, քանի որ բնակարան տրամադրելու այս պարտավորությունը կրում է պայմանական բնույթ՝ դիմումատուին արդեն վճարված գումարը վերադարձվելու դիմաց: Այսպիսով, այս պարտավորությունը չէր կարող համարվել բացառապես միակողմանի, քանի որ դրա իրականացումը պայմանավորված էր մյուս կողմի՝ որոշակի լրացուցիչ պահանջների կատարմամբ (տե՛ս *Ալեքսենցեյան եւ 28 այլ անձինք ընդդեմ Ռուսաստանի* (որոշում) [Aleksentseva and 28 Others v. Russia (dec.)], թիվ 75025/01 եւ հաջորդները, 2006 թվականի մարտի 23): Ավելին, Կառավարությունը չի ներկայացրել տվյալ բնակարանի վերաբերյալ բավարար մանրամասն տվյալներ: Հետեւաբար Դատարանը մերժում է այս այլընտրանքային տարբերակը:

36. Դատարանը, այնուամենայնիվ, այլ կարծիք ունի երկրորդ այլընտրանքային տարբերակի, մասնավորապես՝ 29 520 000 ՀՀ դրամ՝ հանած 12 870 ԱՄՆ դոլար, վճարելու հետ կապված: Դատարանը համարում է, որ այս այլընտրանքային տարբերակում առաջարկվող փոխհատուցման բնույթն ու չափը նույնիսկ 12 870 ԱՄՆ դոլարը հանելուց հետո համապատասխանում է

սահմանված սկզբունքներին եւ *Մինասյանի եւ Սեմերջյանի* գործով ((արդարացի փոխհատուցում), թիվ 27651/05, §§ 17-21, 2011 թվականի հունիսի 7) արդարացի փոխհատուցման վճռով շնորհված գումարին: Կառավարության հայտարարության իրականացումը խթանելու եւ ստացվող գումարի հաշվարկման մեջ ցանկացած անորոշությունից խուսափելու նպատակով Դատարանն ընդգծում է, որ 29 520 000 ՀՀ դրամից հանվող 12 870 ԱՄՆ դոլարը պետք է փոխարկվի ՀՀ դրամով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

37. Հաշվի առնելով Կառավարության հայտարարության մեջ բերված փաստարկների բնույթը, ինչպես նաեւ առաջարկվող փոխհատուցման գումարը, որը Դատարանը հիմնավորված է համարում գործի տվյալ հանգամանքներում, Դատարանը համարում է, որ գանգատի քննությունը շարունակելն այլեւս արդարացված չէ (37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետ):

38. Բացի այդ, հաշվի առնելով վերոնշյալ դիտարկումները եւ մասնավորապես՝ այս հարցի վերաբերյալ գոյություն ունեցող նախադեպային իրավունքը՝ Դատարանը համոզված է, որ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, ինչպես սահմանված է Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով, չի պահանջում շարունակել գանգատի քննությունը (37-րդ հոդվածի 1-ին կետ՝ *վերջում*):

39. Ինչ վերաբերում է Կառավարության հայտարարության իրականացման հետ կապված հարցին, ապա Դատարանն ընդգծում է, որ Կառավարության կողմից իր պարտավորությունները չկատարելու դեպքում այս որոշմամբ չի սահմանափակվում իր կողմից սույն գանգատը, Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն, քննվող գործերի ցուցակ վերադարձնելու վերաբերյալ կայացվելիք որեւէ որոշում (տե՛ս է.Գ.-ն *ընդդեմ Լեհաստանի* (որոշում) [*E.G. v. Poland* (dec.)], թիվ 50425/99, § 29, ՄԻԵԴ 2008-... (քաղվածքներ)):

Բ. Կոնվենցիայի եւ թիվ 1 արձանագրության մյուս ենթադրյալ խախտումները

40. Դիմումատուն, Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն, նաեւ բողոքել է, որ ներպետական դատարանի կողմից շնորհված փոխհատուցման գումարը եղել է ոչ բավարար, եւ չի շնորհվել որեւէ փոխհատուցում՝ [բնակարանով] ծանրաբեռնված հողամասի նկատմամբ օգտագործման իր իրավունքի դադարեցման համար: Նա նաեւ առաջ է քաշել մի շարք բողոքներ՝ Կոնվենցիայի 6-րդ, 8-րդ, 13-րդ եւ 14-րդ հոդվածների մասով:

41. Այնուամենայնիվ, Դատարանը, հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը, եւ այնքանով, որքանով բողոքի հիմքում ընկած հարցերի քննությունն իր իրավասության սահմաններում է, գտնում է, որ դրանք չեն պարունակում Կոնվենցիայով կամ դրան կից արձանագրություններով սահմանված իրավունքների եւ ազատությունների խախտման որեւէ հատկանիշ: Այսպիսով հետեւում է, որ գանգատն այս մասով ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետին եւ 4-րդ կետին համապատասխան:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նպատակահարմար է գործը քննվող գործերի ցուցակից հանելը:

Այս հիմնավորմամբ Դատարանը միաձայն՝

Ընդունում է ի գիտություն պատասխանող Կառավարության հայտարարության պայմանները՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի մասով, այդ հայտարարության մեջ ընդգրկված երկրորդ այլընտրանքային տարբերակում առաջարկվող փոխհատուցման պայմանները, ինչպես նաեւ դրանում նշված պարտավորությունների կատարումն ապահովելու եղանակները.

Որոշում է գանգատը՝ դիմումատուին բնակարանից զրկելու մասով, հանել իր կողմից քննվող գործերի ցուցակից՝ Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետին համապատասխան.

Հայտարարում է գանգատի մնացած մասն անընդունելի:

Սանտիագո Կեսադա

Ժոզեփ Քասադեալ

Քարտուղար

Նախագահ